
ԳՆԵԼ ՍՏԵՓԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ պատմագիտական միտքը ծանր կորուստ կրեց: Կյանքից անժամանակ հեռացավ ժամանակակից անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Գնել Ստեփանի Գրիգորյանը:



Գ. Գրիգորյանը ծնվել է 1947 թ. դեկտեմբերի 29-ին, Աբովյանի շրջանի Կոտայք գյուղում: 1963 թ. ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1967 թ. ավարտել է հիշյալ ինստիտուտը, ապա զորակոչվել խորհրդային բանակ: 1969 թ. հունվարի 16-ից աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, մասնագիտացել միջնադարյան Հայաստանի պատմության հարցերով: 1982 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դդ.» թեմայով: 1984 թ. նշանակվել է ավագ գիտաշխատողի պաշտոնում: 2002 թ. դարձել է ինստիտուտի գիտական

հարցերի գծով փոխտնօրեն:

Գ. Գրիգորյանը դասավանդել է նաև հանրապետության բուհերում և Մայր Աթոռի Գևորգյան ճեմարանում:

Նա իսկական մտավորական էր, գիտնական բառիս ամենալայն իմաստով: Երբ բազմաթիվ հոդվածներով ու հրապարակումներով Գ. Գրիգորյանը նշանակալի ներդրում է ունեցել հայ միջնադարագիտության ասպարեզում: Առաջին գիտական մենագրությունը՝ «Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դդ.» (Երևան, 1983), նոր խոսք էր հայ միջնադարագիտության ասպարեզում: Ուսումնասիրությունը նվիրված է զարգացած միջնադարյան Հայաստանի պետական կարևոր կազմավորումներից մեկի պատմությանը: Աշխատությունում մանրամասն լուսաբանվում են ոչ միայն Տարոնի և հայկական այլ իշխանությունների, այլև հարևան երկրների՝ Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության հետ հայկական այդ իշխանությունների ունեցած հարաբերություններին առնչվող կարևորագույն հարցեր:

Գիտնականի հաջորդ մենագրությունը նվիրված է Բագրատունյաց մայրաքաղաք Անիի հոգևոր և տնտեսական կյանքի լուսաբանմանը: Գ. Գրիգորյանի «Նվիրատվությունները Անիի եկեղեցիներին ու վանքե-

րին» (Ս. Էջմիածին, 2002) աշխատությունում հեղինակը կիրառել է հարցի լուսաբանման այնպիսի մոտեցում, որի շնորհիվ որոշակի են դառնում հոգևոր մարմինների կալվածքների վերաբերյալ պատկերացումները, բացահայտվում նվիրատվությունների շարժընթացը, ցույց տրվում կալվածքների կառուցվածքն ու նշանակությունը, եկամտաբերությունը, գները, դրանց նկատմամբ իրավունքի հիմնական ձևերը և այլն: Համակողմանի քննության են առնվում նվիրատվությունների արժեքն ու կառուցվածքը, նվիրատուների սոցիալական կազմը: Այդ առումով սույն մենագրությունը հայ միջնադարագիտության բնագավառում եզակի է:

Գ. Գրիգորյանը հեղինակել է նաև «ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 60 տարին» (Երևան, 2003) աշխատությունը: Նա, իրավամբ, այդ գիտական հաստատության պատմության կենդանի տարեգիրն էր: Այդ գրքում ի մի է բերվում ինստիտուտի 60-ամյա կենսագրությունը, նրա ունեցած ավանդը հայագիտության զարգացման գործում: Այն XX դարի երկրորդ կեսի հայ պատմագիտական մտքի նվաճումների մի յուրատեսակ ամփոփում է:

Գ. Գրիգորյան մարդուն, քաղաքացուն, գիտնականին թեկուզև հպանցիկ ճանաչողներն առաջին հերթին կնշեն նրա մարդկային բարոյական բարձր նկարագիրը: Նրա անսահման բարությունն ու հոգատարությունը նկատելի էր իր գործունեության բոլոր ոլորտներում՝ ընտանիքից մինչև ընկերություն, լսարանից մինչև ինստիտուտ: Գ. Գրիգորյանը հատկապես ուշադիր էր երիտասարդ սերնդի նկատմամբ: Չափազանց մեծ է նրա վաստակը հայկական պատմագիտական մտքի գլխավոր դարբնոցի՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գործունեության մեջ:

Գ. Գրիգորյանը իր երկրի իսկական քաղաքացին էր, նա ապրում և շնչում էր իր երկրի հոգսերով, ուրախանում հաջողություններով: Նրա համար հայրենիքը բարձրագույն արժեք էր: Երկրին բաժին հասած դժվարությունները հավասարապես իրենն էին:

Գ. Գրիգորյանի հիշատակը միշտ վառ կմնա նրա ավագ ու կրտսեր գործընկերների և բոլոր ճանաչողների սրտերում: